600.0427.13.11.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

13 նոյեմբերի 2019 թվականի №427Ա

ք.Երևան

«ՆԱՐԷՆԵՐԳՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ԳԱՌՆԻ» ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 23-րդ և 35-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, հաշվի առնելով «ՆԱՐԷՆԵՐԳՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2019 թվականի հոկտեմբերի 24-ի հայտը և նոյեմբերի 6–ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ՆԱՐԷՆԵՐԳՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել «Գառնի» փոքր հիդրոէլեկտրակայանում (Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի վարչական տարածքում՝ Ազատ գետի Գառնի և Գողթ վտակների վրա («Գառնի» ջրօգտագործողների ընկերությանը հանձնված ջրատարներից) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2034 թվականի նոյեմբերի 14-ը գործողության ժամկետով:
2. Հաստատել «ՆԱՐԷՆԵՐԳՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրվող «Գառնի» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. «ՆԱՐԷՆԵՐԳՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ «Գառնի» փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով սահմանված

տասնհինգ տարվա ժամկետը «ՆԱՐԷՆԵՐԳՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության համար ավարտվել է 2019 թվականի մայիսի 14-ին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի նոյեմբերի 14-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Մ. ԱՂԻՆՅԱՆ**

ք. Երևան
13 նոյեմբեր 2019թ.